

քին դործոց նախարար՝ փութաց, իրաւ է, փարատելու — Հոռմի հայոց դեսպանատան մէջ իսկ — մեր ստացած ծանր տպաւորութիւնը, հաւատացնելով, որ իշխան Մաշաբեկի, թէեւ դեսպան, բայց մեկուսացած անհատ մըն է եւ որ անոր կարծիքները բնաւ չի բաժնէր Վրաստանի տէր-կուսակցութիւնը, — այնուամենայնիւ, կասկածէ դուրս է, տարաբախտաբար, որ վրացական որոշ շրջաններում տակաւին ուժեղ է թրքամոլ տրամադրութիւնը եւ թուրքերուն դործակցելու ցանկութիւնը: Դիտեցէք միայն Փարիզի «Պրովէքէտ» ամսագրին չուրջը համախմբուած դործիչները, անոնց քաղաքական հրապարակախօսութիւնն ու մտայնութիւնը...:

Աւելորդ է ըսել, որ թուրքական նոր արշաւանքի պարագային մահացու հարուածն է որ պիտի հասնի Հայաստանին:

Թէ ինչ դիրք պիտի բռնէ իշխանութեան զուլի անցած ՄակԴոնալդներու կուսակցութիւնը ապագային, երբ հայոց հարցը, մոռացութեան ջրերէն դուրս լողալով, քաղաքական բարեպատեհ պայմաններու մէջ կրնայ վերըստին ցցուիլ թուրքերոյ դէմ, կամ թէ երբ հայութեան մնացորդները Կովկասի մէջ ենթարկուին նոր աղէտաւոր փորձութիւններու — այժմէն, ի հարկէ, չենք կարող որոշապէս գուշակել: Դժուար է, սակայն, ենթադրել, որ անոնք ալ պիտի մատնեն մեզ մեր դարաւոր ուսոյի քմահաճոյքին եւ անտարբեր հանդիսատես լինին մեր ժողովրդի խողխողումին, ունենալով հանդերձ դահճին վրայ աղբելու զօրաւոր միջոցներ: Դժուար է ենթադրել, որ Պիկոնսֆիլաներու, Հանսթոններու, Լօրանտփներու դերը ստանձնեն ՄակԴոնալդ, Հենտերսըն, Սնօրդէն, որոնք, ինչ ալ որ ըսեն, մարդկային սիրտ մ'ունին իրենց կուրծքին տակ եւ կուսակցական հաւատամբ մը, որ տասնեակ տարիներէ ի վեր իրենց աւետարանն է եւ իրենց գոյութեան փաստը: Դժուար է տարակուսիլ, որ անոնք պիտի ընեն իրենց կարելին՝ նոր հայաջինջ սարսափները կանխելու, ի հարկին պիտի յարուցանեն նաեւ ուրիշ պետութիւններու, Աղբերու Դաշնակցութեան միջամտութիւնը:

Վերջապէս, դժուար է հաւատալ, որ հայ-

կական դրամայի նոր, արիւնոտ արարուածներու հանդէպ չէզոք, անտարբեր պիտի մնայ նոյն ինքը Աղբերու Դաշնակցութիւնը, որ պիտի զօրանայ հետզհետէ — բրիտանական Աշխատաւորութեան մշտնջենաւոր ու հզօր մղումով — պիտի կոփուի ու կատարելագործուի անոր մեքենան, պիտի դառնայ անարկու ուժ մը, ընդունակ միջամտելու աշխարհի բոլոր անցքերու մէջ ոչ միայն սպառնալիքներով, այլ եւ երկաթի կուռ հարուածներով, ընդունակ պարտադրելու իր կամքը բոլոր խռովարար, հակամարդկային, սեւ ուժերուն...:

* * *

Թուրքական նոր արշաւանք մը դէպի Կովկաս, բռնէք, մահացու աղէտ պիտի լինի մեր ազգի համար:

Մեզի կը թուի թէ՛ նոյնպիսի մահացու վրտանդ մըն է հայ ժողովուրդի գոյութեան համար — Ուրալայնայի անջատումը Ռուսաստանէն:

Երեւակայեցէք, որ այդ երկիրը — Ուրալայնա — իր 30 միլիոն բնակչութեամբ օր մը քաղաքական բացառիկ պարագաներու դասաւորման մէջ ապստամբի եւ յայտարարէ իր խրդումը Ռուսաստանի հետ եւ իր բացարձակ անկախութիւնը:

Ի՞նչ պիտի լինի, ինչպէ՞ս արդեօք կը նշկարուի հաւանական հեռապատկերը: Միամիտ կը լինէինք կարծելով, թէ Մեծն Ռուսիան (Վէլիկոօոսիա) պիտի համակերպի եւ պիտի մարսէ այդ զարհուրելի անդամահատումը: Ռուսաստանը — զրկուած արդէն մեծ ծովերէն, այժմ ալ զրկուած Սեւ ծովէն ու Կովկասէն — որ իրաւամբ կը համարուի «ռուսական թաղի դահարը» — զրկուած Դոնի աւազանէն, ու Բաթումէն, քարածուխի, քարիւղի, մարդանցի վիթխարի հարստութիւններէն: Ութսուն միլիոն ռուս ազգը — փակուած հսկայ անկ վանդակի մը մէջ... Անբերեակայելի կացութիւն մը: Անտարակոյս, նա օրհասական ճիգեր պիտի ընէ դուրս նետուելու եւ պիտի բացուի արիւնահեղ բախումներու, պատերազմներու երկարատեւ շրջան մը, — պատերազմներ, որ չեն կարող չվերջանալ վելիկոօսներու յաղթանակով:

Երեւակայեցէք Կովկասի եւ մասնաւորա-